




Ա. ԴԱԼԱԶՅԱՆ

ԶԱՐՄԱՆԱՀՐԱՇ ԲՆԱԳԻԿԱՐՀ



Կազմեց Անուշ Արտեմի ԴԱԼԱԶՅԱՆ

Հարյուսներ

Բնակչութեան



ԵՐԵՎԱՆ – 2001

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԵԴԻՏԱԿ ԱՆՁԱՆՑԻ ՀԱՐԳԱՎԱՐԻ
Կրթական Համալր
ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀՏԴ 59
ԳՄԴ 28.6
Զ 386

Հրատարակության գլխավոր տնօրեն՝ ՍՈԿՐԱՏ ՄԿՐՏՅԱՆ
Տնօրեն՝ ՍԱՀԱՄ ՄՆԱՊԱԿԱՆՅԱՆ

Նկարիչ և գեղարվեստական խմբագիր՝ ԱՐՄԵՆԻԱ ԲԱՂՋԱՆՅԱՆ
Դամակարգչային ծնավորումը՝ ԳՐԵԳՈՐ ԱՐԳՎԱՅԱՆԻ
Դամակարգչային շարվածքը՝ ԼԱԼԻ ԴՈԿՍԵԹՅԱՆԻ
Մրրագրիչ՝ ԽԱՐԱԿԱՆ ՄԱՐՍԻՆՅԱՆ

Զ 386 Զարմանահրաշ բնաշխարհ:

/Կազմեց Անուշ Արտեմի Դալլարյանը: – Եր.:
«Զանգակ-97», 2001.- 80 էջ:

Դավարածուում ամփոփված են հետաքրքիր տեղեկություններ՝
կենդանիների, բռչուների ապելակերպի, վարք ու բարքի նախն,
նրանց վերաբերող ուսանավորներ, պատճենահանումներ, հանելուկներ,
երգեր, պահպանակներ:

Գիրքը կօգտագործվի որպես օժանդակ ծեռնարկ դասվարմների,
տարրական դասարանների սաների, ինչպես նաև ուսանողների
համար:

Տպագրությունը օֆսեք
Թուրք օֆսեք
Ծավալը 5 տպ. մանուկ
Տպարանակը՝ 500 օրինակ
Գինը՝ պայմանագրային

Զ 1907000000
0003(01)-2001 2001

ԳՄԴ 28.6

ISBN – 99930-2-240-3

© «Զանգակ-97» հրատ.

«Զանգակ-97» հրատարակություն
375010, Երևան, Վարդանանց փակունի 8
Հեռ. 54-89-32, 54-05-17; E-mail: zangak@arminco.com
Տպագրած է «Զանգակ-97» հրատարակության տպարանում

Հ ո վ ա ն գ ա կ ու ր յ ու ն

	Ազռավ	5		Գետաձի	19		Թութակ	30
	Աղավնի	7		Գորտ	21		Իշխան	31
	Աղվես	8		Գոմեց	22		Լուսան	31
	Այծ	11		Ղելֆին	23		Խոզ	32
	Առյուծ	12		Եղնիկ	24		Ծիծեռնակ	33
	Արագիլ	13		Եղջերու	25		Կապիկ	35
	Արժիվ	14		Զատիկ	26		Կատու	36
	Արջ	14		Զեբր	27		Կարապ	37
	Բադ	17		Էջ	28		Կենգուրու	38
	Գայլ	17		Ընձուղտ	29		Կետ	38

	Կղաքիս	40		ճպուռ	52		Սազ	65
	Կկու	40		Մեղու	53		Սիրամարգ	66
	Կոկորդիլոս	42		Մողես	54		Ակյուռ	67
	Կով	43		Նապաստակ	55		Վագր	69
	Կրիա	44		Շուն	57		Ուղտ	70
	Կռունկ	45		Ոզնի	58		Փիղ	72
	Ճավ	46		Ոչխար	60		Փայտփորիկ	74
	Ճնդկահավ	48		Չղջիկ	61		Օձ	75
	Ճովագ և ընձառյուծ	49		Պինգվին	63			
	Զի	50		Զայլամ	64			
	ճագար	51		Ոնգեղջյուր	65			

Դու գիտե՞ս, որ





ԱԳՈՎԱԿ

Այն ո՞ր թշունն է կռավան,
Որ չնա սիրում նարդիկ նրան:

Ագովակն ու արջմագրավը չպետք է իրար հետ շփոթել: Չնայած նրանք ցեղակիցներ են, բայց ինչտուրյամբ զանազանվում են նույնիսկ արտաքինով: Արջմագրավը խոշոր թռչուն է: Նրա մարմնի երկարությունը մինչև 66 սմ է: Փետուրները խիտ են, փայլուն ու սև: Ագովակն ավելի փոքր է, և որ գլխավորն է, նրանց մեծամասնությունն էլ սև չէ: Սև են միայն ագրավների գլուխը, թևերն ու պոչը, իսկ մարմններ ծխամոլիրագույն են: Նրանց հենց այդպես էլ անվանում են՝ նոխրագույն ագրավներ:

Իրենց ավելի խոշոր ազգականից՝ արջմագրավից, ագրավները վախենում են և նրա վրա հարձակվում են ամրող երամով:

Արջմագրավն ամենակեր է, ուստում է մրգեր, հացահատիկ, ամեն տեսակ կանաչեղեն, ավերում նաև բներ՝ գողանալով. Անոյնիսկ, խոշոր որորների ծվերն ու ծագերին: Ոչնչացնում է փողորիկ նապաստակների և որոշ կրծողների, չի խորչում նաև լեշից: Ունի սուր լսողություն և տեսողություն: Տարվա բոլոր պահերին մենք ագրավներ ենք տեսնում:

Որսորդական տնտեսություններում ագրավները երբեմն ոչնչացնում են բաղի ծվերը: Սպասում է ագրավն այնքան, մինչև բաղը հեռանում է բնից, ապա թռցնում է ծուն, մի հարմար տեղ ջարդում ու խնում: Դրա համար էլ այդպիսի վայրերում ագրավների վրա կրակում են և սպասում: Սակայն հեշտ գործ չէ ագրավ խփելը, որովհետև

Արանք հիանալի զանազանում են հրացանավոր մարդուն և խուսափում նրանից: Բայց ագռավների խորամանկության դեմ մարդիկ էլ ունեն իրենցը տնտեսության որորորդ բաղերի բների մոտ եղեգներից կախում է արծաթափայլ փայլաթիթեղի կտորտանք և վրան սպիտակ թել փաթաթում: Զգուշավոր ագռավները երկնչում են այդպիսի անծանոթ խորտվիլակներից:

ԱԳՐԱՎԻ ԵՐԱԶՄՆՔԸ

Ագռավն ասում էր. «Թե բախսու քերի
Ու դառնամ արքան թևավորների,
Կփոխեմ մեր փայտ բարձերը բոլոր,
Որ ուրախանան հավքերը մոլոր:
Կջնջեմ իսկոյն փարրակի գույնը,
Կասեմ՝ ավելորդ շուայլուրյուն է:
Ինչո՞ւ սփիակը անվերջ դայլայի,
Թող կաշաղակն էլ քեմը վայելի»:
Դեղձանիկն ասաց.
«Շատ ենք բախսրավոր,
Որ դու ագռավ ես և ոչ բազավոր»:



Եվ արջնագրավներին, և ագռավներին կարելի է խոսել սովորեցնել: Այս թօյունները շատ են սիրում նաև փայլուն իրեր գողանալ: Արջնագրավն իսկական սանհիտար է, որում է կրծողների, ոչնչացնում լեշն ու իհվանդ, սատկող կենդանիներին:

ԵՐԿՈՒ ԱԳՐԱՎ

- Կը ո՞ւ մի ագռավ կուավից,
Նսկեց կաղաու ճյուղին մնծ:
- Կը ո՞ւ ագռավի մոլոր ռոպավ՝
Ժեկին փալով մի ագռավ:
- Կը ո՞ւ, փող ճարենք, – ասաց նա, –
Առնենք շքեղ մի սահնակ,
Նսկենք զնանք Լիրանան,
Ոսկենք ընկույզ ու բանան:

Երբ Նոյ նոհատեցը դադանից ուղարկուած է
ագռավնեն լուր բերելու, ևս գնուած է այլ շա շի
վերադառնում: Ուստի Նոյն անիծուամ է

ագռավին և տառամ. «Կերտածոյ ժորդ շգնա,
բոշացոյ ծակվի, թափվի»: Ռյադուս էլլինուամէ:





Առավսի

Մրցունն է մեզ հին ընկեր,
Նամակաւոր, նամակարտ,
Նո նշան է խաղաղություն,
Բարեկամն է ամեն մի կռան:

Աղավնին հոչակված է ճաճապարհը ծիշու գտնելու և, նույնիսկ, շատ հեռավոր (500 կմ և ավելի) վայրերից վերադառնալու կարողությամբ: Փռստային աղավնին հարյուրավոր տարիներ ծառայել է մարդկանց: Այժմ, երբ լուրերը տեղ են հասնում ռադիոյի և հեռագրի, զնացքների ու ինքնարհուների միջոցով, աղավնային փոստը կորցրել է իր նշանակությունը: Սակայն երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ աղավնիներին օգտագործում էին տեղեկությունները տեղ հասցնելու համար:

ճապոնիայում բուժում էին, անգամ, նոր ցեղի աղավնիներ, որոնք ընդունակ էին թռչելու գիշերը, թշնամին չեր կարող տեսնել և սպանել օդային փոստատարին, նաև չեր դառնում նաև ցերեկային գիշատիչ թռչունների գործ:

Քիչ չեն նաև վայրի աղավնիները: Սրանք տարբեր գույն ունեն, տարբեր չափեր, բայց ննան են օրգանիզմի կառուցվածքով ու ապրելակերպով: Նրանք իրենց ծագերին կերակրում են թռչնի կաթով:

Ծերեւակ աղավնի, նախշուն աղավնի,
Կապույտ երկնքում ուրախ սակառնիր,
Դու խաղաղության խնդախ նշան,
Կապույտում բացված թևավոր շուշան:




Կրկներգ՝

Կյանքում դեռ այնքան չար բազեներ կան,
Բայց դու եթերում ճախրիր հաղթական,
Դու խաղաղության խնդալի նշան,
Կապույտում բացված թևավոր շուշան:

Դու մեր սրբերին այնքան մըրերին
Ու միշտ կլինեն մեր գան սիրելին,
Դու խաղաղության խնդալի նշան,
Կապույտում բացված թևավոր շուշան:

Կրկներգ՝



ԱՂՎԵՍ

Կենդանի է վայրի,
Յիբուշ ու թանկ նորդ ունի,
Ինքն՝ ազատ, իրամանի,
Բույնը ունի հազար ծախ:

Նեքիաթներում աղվեսը միշտ խելացի է, խորամանկ, ճարպիկ, խարում է մարդկանց ու գազաններին: Բայց այդպիս է, արդյոք, իրականում: Եթե պետք է փրկել սեփական կյանքը կամ սնունդ հայրայթել, աղվեսն իր հնարամտությամբ, իհարկե, գերազանցում է շատ կենդանիների, բայց, այնուամենայնիվ, նա խորամանկ և, նույնիսկ, ամենազգույշ գազանը չէ: Աղվեսը շատ հետաքրքրասերն է, նրան ամեն ինչ հետաքրքրում է: Երբեմն, հետաքրքրությունից դրդված, նույնիսկ արհանարիում է զգուշությունը: Եվ եթե չլինեին նրա քողարկվելու հմտությունը, սուր լսողությունը, տեսողությունն ու հոտառությունը, վաստ կլիներ շեկիկի բանը: Փորձանքից նրան հեռու է պահում հատկապես հոտառությունը, թշնամու հոտոր նա զգում է դեռ հեռվից և հասնում ժամանակին փախչել կամ թարնվել: Իսկ լսողությունը օգնում է կեր հայրայթելուն: Զնոանն աղվեսն զբաղվում է մկներ որսալով՝ քայլում և հետևի թաթերին հենված, ցատկուում, պտույտներ գործում: Նայողին թվում է, թե աղվեսը պարում է:

Աղվեսը դժվարությամբ է հետապնդում և հասնում նապաստակին, և այն կարծիքը, թե, իբր, աղվեսը շատ նապաստակներ է ոչնչացնում, ծիշտ չէ: Աղվեսի հիմնական կերը դաշտամկներն ու մկներն են: Տարվա ընթացքում աղվեսը ոչնչացնում է մի քանի հազար մուկ, իսկ իր ծագուկների հետ՝ երկու-երեք անգամ ավելի:

Դրանով նա մեծ օգուտ է բերում, որովհետև այդ կրծողները մեծապես վնասում են գյուղատնտեսությանը:

Աղվեսի ծագուկները, որ լինում են 8–10 հատ և ավելի, ծնվում են գարնանը կամ ամռան սկզբին: Չորս ամսականում արդեն աղվեսի ծագուկները դառնում են ինքնուրույն և հեռանում ծնողներից:

Սորթու գույնը ծմեռը չի փոխում, դրանով նա տարրերվում է մկյուրից և նապաստակից: Նա իր համար խոր բույն է շինում գլխավոր և գաղտնի մուտքերով:

**Օ, բարե ծեկ, բարե ծեկ,
Միկրոջ ծուռ է, սեւրեա,
Հանկ է ու ուզում, չեմ կրա թեկ:**

ԱՆԿԵՐԾ ՄԴՎԵՍԸ

Մի անգամ թերթում երևաց հետևյալ հայտարարությունը. «Պահանջվում է արտակարգ արժանիքներով օժտված անձնավորություն՝ հատուկ աշխատանքի համար»:

Շատ կենդանիներ ներկայացան առյուծին, և, առաջին հերթին, աղվեսը, որը խորը գլուխ տալուց հետո ասաց.



— Թագավոր, ես ի ծնե ճարպիկ եմ, ճարտար լեզու ունեմ, կարող եմ սկը սպիտակ ներկայացնել, առանց ինձ զգացնել տալու...»

— Լավ, բավական է,— ընդհատեց նրան առուժը,— բայց դու ինչո՞ւ չես խոսում քո արժանիքների մասին: Մեզ հարկավոր է աշխատասեր, պարկեշտ, ազնիվ մի անձնակարություն: Ի՞նչ կանոն:

— Ներեցեք, թագավոր, ես խոսում եմ միայն այն մասին, ինչին լավ եմ տիրապետում...

ԱԴՎԵՍԸ

Առանց «Պ» տառի

Լինում է մի աղվես: Մի օր այդ աղվեսը որոշում է գնալ զրունակ մարդկանց այգիներում: Հավերից լեկ էր, որ այնպեղ շատ ավելի լավ բաներ կան, քան անդառուս: Եվ այս մի մուր զիշեր գնում է զյուղ՝ որտորդի այգում զրունակություն: Չը ունենալիս հանկարծ գլուխում է որտորդի շամը: Ծունը սկսում է հաշել բայց մինչև որտորդը կաներ, կհագնվեր և դուրս կգար, աղվեսը հասցնում է փախչել անդառ՝ միքրում կրկնելու:

— Իմ անդառը ոչնչով վագ չէ մարդկանց այգիներից: Ես այսուհետեւ էլ երբեք չեմ գնա մարդկանց այգիներում զրունակություն:

Եվ դրանից հետո աղվեսը չէր հավագում հավերի ասածիմ: Որդեռն հավ էր գլուխում՝ վազում էր, բռնում և վերջը դադիւն:



ԱԴՎԵՍԸ

Ասում են, թե ես զող եմ, իբր հավ ճանկող եմ, ճուրիկի միս ուվող եմ, բաղիկի վիզ հապող եմ... Սույր է, սիսակ են ասում, հավագացեք աղվեսին, Զար արլորձ է բամբասում այդ բոլորը իմ մասին:



ԱՅԾ

Պողէր ունի ձիգ ու հարմար,
Բայց, ինչ արած, շաբ է համար:

Կենդանաբանական հատկանիշներով նման են ոչխարներին, այն տարրերությամբ, որ չունեն արցունքային փոս, միջկճակային գեղձ, եղջյուրները հիմքում իրար ավելի մոտ են, նոխագների (արուների) պոչը հիմքում կան մաշկային գեղձեր՝ արտազատուկի բնորոշ հոտով:

Այծերն ունեն յուրահասուկ ձայն: Պոչը կարծ է (8-12սմ): Սազածածկը կազմված է երկար, կոպիտ, միատարր մագերից, որոնք պարանոցի և կրծքի վրա ավելի երկար են, իսկ կզակի մասում կազմում են մորուք: Սեռահասուն են դառնում երկրորդ տարում, հղիությունը տևում է 5 ամիս, մեծ մասամբ ծննում են երկու ուկ: Կյանքի տևողությունը՝ 9-10, առավելագույնը՝ 17 տարի: Վայրի այծերը (հայտնի է 8 տեսակ) հոտերով ապրում են դժվարանցնելի զարթիքավի լեռնալանջերին, կիրճերում և ծորերում: Սնվում են խոտարույսերով, ծառաքիրով, մամուռներով, քարաքոսներով և այլն: Դեշտությամբ ընտելացվում են և լավ բազմանում: Տարածված են Հյուսիսարևելյան Աֆրիկայում, Եվրոպայում և Ասիայում: Դայաստանի լեռնային շրջաններում հանդիպում է բեզոարյան այծը:

Այծն եմ, այծը,
Ունեմ պողեր,
Նեղն ընկնելին՝
Մի-մի սուսեր:
Ուղքերս, դե,
Թիմդ եմ, քարակ,
Հազ եմ դալին
Հիուց արագ:

Գայլից անգամ
Չեմ վախենում,
Մի բանից եմ
Լոկ խեղճանում.
Կարճ է պոչը
Սեր ողջ ցեղի,
Ծանձերը մեզ
Շակ են նեղում:



ԱՌՅՈՒՑ

Ուժ, ճարպկությամբ, համարձակությամբ դժվար թե մեկը համեմատվի առյուծի հետ: Նա չի թաքնվում, գաղտագործի չի հարձակվում զոհի վրա: Առյուծը հպարտ նախազգուշացնում է: «Զգուշացե՛ք, գազաններ, որսի են ելել: Զգուշացի՛ր, վարազ և դու, շերտավոր վագերածի,

արագավազ այծքար և հզոր գոմեշ»: Զգուշացե՛ք բոլոր, առյուծը կարող է նոյնիսկ զյուղ ներխուժել և վախեցած մարդկանց աչքի առաջ քարշ տալ, տանել մատղաշ ցիկի կամ կովի:

Առյուծի նորածին ճագուկմերը՝ կորյունները, որ սովորաբար երեքն են լինում, շատ փոքր են, մոտավորապես 80 սմ երկարությամբ, խայտաբղետ, հետո մեծանալով նրանք դառնում են միագույն:

Ես առյուծն եմ, այ թե ինչ,
Չունզիների բնակիչ
Բայց արի տես՝ ո՞ւ՞ եմ ես,
Կծկվել եմ կարվի պես:
Աչքերին մեջ մշուշ է,
Չեմ հասկանում ինչ գույժ է,
Այդպիս էլ չեմ գուշակում,
Թեն ինչու եմ վանդակում:
Բացիք դուռը, տուն զնամ,
Թեն չէ պիդի խենթանամ:



Արագիլ բարով եկար,
Հայ, արագիլ բարով եկար.
Բունդ շնկիր էն հիմ ծառին,
Սեզ մուտ մնաւ ամբողջ փարին:

ԱՐԱԳԻԼ

Ամեն կտրի կայ զարունքին
Նև իր բույն է դառնում կրկին,
Որում է օձ, զորու ու ծնկեր,
Բարեկամն է կաղու նև ծառ:

Արագիլը շիվերից և ճյուղերից մեծ, լայն բույն է հյուսում գյուղական տների տանիքներին: Մարդիկ շատ թանկ են գնահատում այդ բարեկամությունը և նույնիսկ կարծում են, որ արագիլները երջանկություն են բերում տանտերերին: Եթե արագիլը բույն է հյուսում ծեր տանիքին, ապա մի քանդեք այն, նրանք գարնանը կգան և ծագեր կհանճն: Մինչև աշուն նրանք կմեծանան, կիզորանան և իրենց ծնողների հետ կթռչեն հարավ:

Արագիլները սնվում են գորտերով, մողեսներով և այլ միջատներով: Նրանք ծայն չեն հանում, միմյանց հետ «խոտում են» կտուցների կաֆկափյունով:

Հսում են, թե արագիլներն իրենց երկրում մարդ էն: Եղբ մողենում է շալուս ժամանակը, նրանք գալիս են գեղի մոդ, լողանում ջրում. Բայց չունի վերուրներ հագնում և ճանադարձ ընկնում դեպի մեր երկերը: Ա երադարձի ժամանակ նրանք հավաքվում են մի բարյար սարի, մադաշ անում լսոցնուն, լողանում գերում և նորից մարդ էն գտանում, գնում իրենց երկերը: Հսում էն են, որ արագիլն ամեն բարի իւղում է իր յագերից մեջն՝ լսոցնուն մադաշ անելու համար:



ԱՐԵՒԿ

Արծիվները ճուռակների ընտանիքի գիշատիչ թռչուններ են: Թևերի բացվածքը՝ մինչև 2.5 մ, քաշը՝ մինչև 6.5 կգ: Ոտքերը փետրավորված են մինչև կրնկաթաթերը, մատները ուժեղ են, ծիրաններով: Էգը և արուն միագույն են: Դայտմիթ է արծիվների 12 տեսակ, որոնք տարածված են Եվրոպայում, Ասիայում, Աֆրիկայում և Հյուսիսային Եվրոպայում:

Ամերիկայում են ծառերի, ժայռերի կամ գետերի վրա: Դնում են 1-3 սպիտակ, երբեմն՝ կարմրագորշավուն բժերով ձու: 2 սեռն էլ թխում են (40-45 օր): Սնվում են փոքր ու միջին մեծության ողնաշարավոր կենդանիներով, երբեմն՝ լեշերով: ՀՀ-ում տարածված է 4 տեսակ՝ քարարծիվ, թզուկ, փոքր և տափաստանային: Բացառությամբ քարարծիվի, մյուսներն օգտակար են, ոչնչացնում են վնասակար կրծողներին:

ԱՐՁ

Ճեղ որ ձմեռն է հզնւօ,
Թարը գրկուօ է նզուօ:

Խոր անկառոյ- բույն գրու,
Ողջ ձմեռը բռն մրու:
Գարուն եկում վեր կնուսու,
Քուրոք հազին հեռացու:





Qորշ և սպիտակ արջերի մասին անմիջապես կասես, որ նրանք ցեղակիցներ են, թեև արտաքին տեսքով բավականին տարրերվում են: Բներախն ծյուների մեջ ապրող սպիտակ արջը միշտ սպիտակ է:

Իսկ գորշ արջերը լինում են և հարդագույն, և շագանակագույն, և գրեթե սև:

Սպիտակ արջը երկրագոյի ամենախոշոր գիշատիչ կենդանին է: Արկտիկայից բացի, սպիտակ արջերն ուրիշ ոչ մի տեղ չեն հանդիպում: Սպիտակ արջը կարող

է ժամում 4–5 կմ արագությամբ երկար լողալ, սուզվել գրեթե փոկի նման և երկու րոպե մնալ ջրի տակ: Նա սնվում է փոկերով, ձկներով, թռչուններով:

Գորշ արջերը հիանալի որսորդներ են, բայց ամեն ինչ ուտում են և հաճախ են սնվում անտառային հատապտուղներով:

Արջը մեղրի մեծ սիրահար է, մեղվի խայթոցից անգամ չի վախենա, միայն թե բերանը քաղցրացնի: Աշնանը զազանը հարկադրված է լինում հոգալու հուսալի ապաստանի մասին, ուր կարելի լինի հանգիստ քնել մինչև գարում: Եվ եթե աշնանն արջը բավականաչափ ծարպ չկուտակի, որջում չի փակվի ու ամրող ծմեռ մաս կգա չարացած ու ստված: Ննան «քափառաշրջիկները» վտանգավոր են: Արջի քունը թեքն է: Մայր արջը որջում փակվում է անցյալ տարվա ծագելի հետ, որոնք նրան օգնում են խնամելու նորածիններին, զուր չեն նրանց «դայակներ» անվանում: Թորոքները մինչև երկու տարեկանը միշտ մոր կողդին են մնում: Նորածինները, որ ստվորաբար երկուսն են լինում, լույս աշխարհ են գալիս դաժան ցրտին՝ հունվար–փետրվարին: Մայր արջը նրանց կերպարում է մինչև գարում: Որջից դուրս են գալիս փորք շնիկի չափ դարձած: Գորշ արջերն ապրում են մինչև 50 տարի:

Դայաստանի անտառներում ապրում է գորշ արջը: Արտաքին տեսքը ականջները կլոր են ու փորբիկ, դունչը՝ երկար, թաթերը՝ լայն: Արջը ուտում է խոտ, տերևներ, բույսի արմատներ, միջատներ, թռչուն, ծու և այլն:

ԱՐՁԸ

Ուրբերս հասդ եմ, պոչս՝ կարճ,
Ենձ միք կոչի սարի արջ...
Սարմանվ գուցե քիշ կոպիտ,
Սակայն ունեմ թերուշ սիրով,
Իմ ծագերին սիրասուն,
Անուշ օրոր եմ ասում:
Երբ որ լինում եմ ես կուշտ,
Սասպիր քարի եմ անշուշտ,
Իսկ երբ սոված եղա ես,
Լավ է ինձնից խոսափես...

ԳՈՂ ՔՈԹՈԹԸ

Առանց «Բ» տառի

Մի անգամ արջի քոթոթը ծնողներից թաքուն գնում է մեղուների մոտ՝ մեղր գողանալու: Սոտենում է փեթակներին, իսկ մեղուները չեն երևում: Քոթոթը շատ է ուրախանում:

— Ուրեմն եկել եմ ճիշտ ժամանակին, մեղուներն արդեն գնացել են աշխատանքի, — մտածում է քոթոթը:

Քոթոթը թաքը երկարացնում, մտցնում է փեթակի մեջ. այ թեզ հրաշք, փեթակը լիքն է մեղորվ: Այդ է, ուզում է թաքը դուսր հանել ու համով մեղրը լավատել, հանկարծ մեղուները դուրս են թափում և հարձակվում քոթոթի

վրա: Քոթոթը շփոթված փախչում է: Դա դա է լինում քոթոթին, որ մյուս անգամ մենակ մեղր գողանալու չգնա:

**Երջր ժամանակն օրաշացական է եղիլ: Հայր
գողություններ անելու ձամար Աստված
աշրացել է նրա վրա և արջ պարզրել նրան:**



- Արջոնկ, ու՞ր ես գնում դու:
- Մի եղևնի գմնելու:
- Ինչի՞ն է պետք եղևնին:
- Պիպի դոնեմ նոր դարին:
- Դե, կպրիր, դար անդառից:
- Ափոսում եմ..
- Լավ է քերեմ քաղաքից:



Ես քրդուր եմ, անուն՝ արջ,
Դուսր քաց է հյուրի առաջ:
Երե մի օր անդառ զաս դու,
Ես քեզ կպամ դանձի քրու:
Բայց արի դռն՝ մեղր չունեմ
Եվ չզիկին, քե ինչ անեմ:
Սեղուները այդ անպիտան
Գնամ քե չէ վրա կպամ:



ԲԱԴ

Ընտանի բաղերին գնահատում են համեղ մսի, փափուկ աղվամազի և ամուր փետութերի համար: Մեր երկրում բազմացնում են ընտանի բաղերի բազմաթիվ ցեղեր: Դայտնի են երկու սպիտակ, մոխրագույն և սպիտակակուրծք ցեղերը:

Բաղերը ջրային թռչուններ են, և տարվա տաք եղանակներին իրենք են կեր հայրայրում լճակներում, լճերում և բրնձի դաշտերում: Կերակրվում են ծանծաղ ջրերում, հազվադեպ են սուզվում, ավելի շատ ծգտում են լայն կտուցով հասնել հատակին՝ ջրից դուրս բռղմելով պոչը:

Նրանց քաշը հասնում է 3-4 կգ-ի: Վաղ գարնանը եզր ածում է 8-11 ձու: Դազիվ չորացած աղվամազոտ բաղիկներն արդեն կարող են արագ տեղաշարժվել ցամաքում, լողալ և սուզվել:



ԳԱՅՆ

Աքտոր ճրագ էն,

Վայոր շար արագ է,

Ամս օր է երացում,

Խնդի այդ էն առաջ:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ՄԻՒԹ-ԱՐ ՍԵԲԱՍՏԱՆԻ»
ԿՐԵԱԿԱՆ ՀԱՆԵԼ Բ. Բ.
ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Ոգատարությունը հատկապես երևում է վտանգի կամ հիվանդության դեպքում. մայր գայլերը, սակայն, այս ծիծաղեպում անգործ են գտնվում, քանի որ նրանք զլանում են խնամնելու իրենց թուլակազմ կամ վտանգի մեջ ընկած ծագուկներին: Նրանք այդպիսիներին ոչնչացնում են և գրաղվում միայն առողջներով:

Գայլերը շնազգիների ցեղի այդ գիշատիչները, ընտրում են չոր, գետերի մոտ գտնվող, քամուց պաշտպանված որդեր: Ունեն սուր հոտառություն, մեծ մասամբ շրջանցում են թակարդներն ու վտանգը. իսկ դրանց մեջ ընկնելիս, չմատնելով իրենց, լուր կրում են արժանի պատիժը: Գայլը լավ է տարրերում զինված մարդում անգենից: Վտանգի դեպքում վախեցած անհետանում է, իսկ թույլի մոտ դառնում է հանդուգն, համարձակ:

Այս կենդանին բնության մեջ նաև մի տեսակ բուժակի, մաքրողի դեր է կատարում, ոչնչացնում է հիվանդներին, նվազներին, ծերերին: Բացի գորշ գայլից, համարյա նույն կենսածն ունեն նաև մյուս տեսակները ևն, ըստույին գայլերը: Փոխվում է նրանց գումերանգը շեկ, դեղնավուն, նոխրագույն, գծավոր, տարածման վայրը, իսկ բնազգիները, կերը չեն փոխվում:

Ինչպես ամենուր, Դայաստանում տարածված գորշ գայլերը նույնպես համդիպում են ոչխարարուծական շրջաններում, չոր անապատներում, անտառային շրջաններում, ընդհուպ մինչև ալպիական մարգագետիններում:

Գայլերը տարածված են երկրագնդի բոլոր մայրամաքներում: Ապրում են միայնակ կամ ոհմակներով:

ԳԱՅԼԻ «ՍԱՆԻՖԵՍԸ»

Երբ հավաքվեցին գայլերը սոված, Առաջնորդ գայլը գայրույրով ասաց.

— Ինչո՞ւ ոչխարճ էլ մեզ պես ազակ չէ, Իմ ցեղակիցներ, պահանջում եմ ես, Թռղնել, որ նա էլ ուր ուզի զնա, Անհոգ արածի որդեղն կամենա: Ազակուրյուն է ամեն դեղի իշխում, Ո՞ր դարն է, ասեք, ի՞նչ հովիվ, ի՞նչ շում:

Ա ենդադիներին «որեզնելի» Ըստված գայլին Հոգտառություն ովեց, իսկ շանը՝ «ժ»: Գայլը Հորյակվեց, գոմեցի վրա և առցեց պարտապարել: Զկարողանալով այդ անը՝ գայլը գնաց Ըստվու ճար և Հոգտառության փախորին ուժ ինչորեց: Ըստված առաջ գայլի Հոգտառությունը և գոմեց շանը, իսկ շան ուժն էլ ովեց գայլն: Պրակից Հերո շունը Հոգտառությամբ առվելի ապահով մինչակ սրեզնեց եր համար, ինչ գայլը ուժով:

ՍՈՒՏԼԻԿ ՈՐՍԿԱՆՆ ՈՒ ԲԿԼԻԿ ԳԱՅԼԸ

Ինձ բոլորդ էլ լավ ճանաչում եք ու գիտեք իմ հերոսությունները:

Բայց այ, այս մեկը վերջերս պատահեց: Լսած չեք լինի: Մի անգամ անտառում մի գայլ հարձակվեց ինձ վրա: Որ սովորական գայլ լինե՞ր կսպանեի, մորքուց էլ նոր գիշարկ կկարեի: Բայց ախոր շատ մեծ գայլ էր, մի փողի չափ կլիներ: Անմիջապես մոցրի պարկի մեջ: «Եվ ինչու սպամեմ, – մտածեցի, – կտանեմ, կվարժեցնեմ, կարդալ ու գրել կտորեցնեմ, կրկեսում ելույթներ կունենամ»:

Գիտե՞ք, խելոք գայլ դուրս եկավ, ի՞նչ շուտ սովորեց գրել, կարդալ: Միայն թե շատ բկլիկ էր: Սովորելու ընթացքում կերավ մի քանի տառ ու թիվ:

Կարո՞ղ եք ասել, ո՞ր տառերն ու թվերն է կերել Սուտլիկ որսկանի բկլիկ գայլը:

$$12 : ? + 2 = 6$$

$$5 \times ? + 1 = 31$$

$$5 \times ? - 1 = 9$$

$$16 : ? + 6 = 10$$

??ԳԴԵԶ??ԹՁ?ԼԽԾԿՐՊԱՇՎՅՉՈՎՈՍՎԱՐՑ?
ՓՔԵՎ?Ֆ

զվար?, զար?, խա?ել, ար?ի, դեր?ակ, ցն?ուդ



ԳԵՏԱՁԻ

Ա ին հռոմեացիները Աֆրիկայում՝ Նեղոսի գետաքերանում, տեսմելով ծանրամարմին, դանդաղաշարժ ինչ-որ կենդանիների, նրանց անվանեցին հունարեն «հիպոպոտամ» բառով, որ նշանակում է գետի ձի: Բայց գետաձին, թերևս, միայն փոնչացնում է ձիու պես, իսկ ընդհանրապես նրան ամենական նման չէ:

Գետածիու մաշկը փայլուն է, գրեթե մերկ և արագ չորանում է: Աչքերը թմբիկների վրա են և տեղավորված են զլխի վերին մասում, ինչպես գորտինը կամ կոկորդիլոսինը: Թմբիկավոր են նաև ռունգները: Դա շատ հարմար է, քանի որ կարելի է, սուզանավի ջրադիտակների նման, ջրից դուրս թռղնել միայն աչքերի ու ռունգների «կղզյակները»: Գետածիերի փոքրիկ ականջները ևս տեղավորված են «գագարին»: Գլուխը մեծ է, դունչը՝ լայն, աչքերը՝ փոքր: Մատները միացած են փոքր լողաբաղներով:

Ծոգ օրերին գետածիերը ջրից դուրս չեն գալիս: Մի քանի տասնյակ կազմող հոտերով կամ փոքր ընտանիքներով ծողփում են, փնչացնում, ֆսֆում և հաճախ գետով մեկ տարածվում է նրանց մոնշյունը: Գետածիերին մոտենալը վտանգավոր է, նրանք կարող են հարձակվել ոչ միայն մարդկանց, այլև անգամ նավակների վրա՝ հզոր ծնոտներով ջարդելով ու տաշեղի վերածելով դրանք: Գետածիերի երախն ահոելի է, ասես ճամպուկ լինի, իր ժամիքները 70 սմ երկարություն ունեն: Դատկապես մեծ են ներքին օնոտի ժամիքները, որով գետածին, էրսկապատորի շերեփի նման, ջրիմուներ է հավաքում ջրի հատակից: Դատուն գետածին 3 տոննայից ավելի է կշռում, իսկ ծագերը ծնվում են 35–40 կգ քաշով:

Ականջներս չեն գլուխ...
Մանր են ինչպես մարդանի:
Իսկ բերանս լայն ու խոր,
Բայց չեմ խոսում ամեն օր:
Չուրն իմ փունքն է ջինջ ու զուզ,
Ավագանն էլ փոքր ծով:
Գեկածի եմ քսաւանորթ,
Հասդագլուխ, հասդափոր,
Ոլորելս՝ հասդ ծառաբուն,
Կոճղի պես պինդ ու կանգուն:





ԳՈՐԾ

Գորտերը պատկանում են երկվենցաղների ընտանիքի թվին: Ունեն կարծ, լայն մարմին, բույլ արտահայտված պարանոց: Մաշկը հարթ է կամ թեթևակի բշտավոր: Դետին վերջավորությունները ավելի երկար են, քան առջևինները, որի հետևանքով տեղաշարժվում են ցատկերով: Վերին ծմբուի վրա ունեն աստամներ:

Երեխուկների խորիկային ճեղքերը իրանի ձախ կողմում են:

Դայտնի է 32 սեռի 400 տեսակ՝ տարածված գրեթե ամենուրեք:

Ենային գորտեր ապրում են նաև Դայաստանում: Կան ջրային և ցամաքային ծևեր: Շատ երկրներում գորտի միսն ուտում են: Գորտը միաժամանակ ֆիզիոլոգիական փորձերի օբյեկտ է:

Սա առաջ Հարս ե եղել: Ավելորդը
նշանաւելով, որ Հարսն առանց խաչվելու վերցնեամ
Լուսուամ է արդի ուղածը, Բեել է Երևախն, Խեշը
անոնց խելուն դորդ է դարձել և մրել ջառը:

Գորտը լառն

Ալիքների հետ էր վիճում,

Դարձել էր խնձոր ու վիճում էր ինքն իր հետ...

Հետո բազմեց մամուքարին,

Նայեց մոդի հսկա ծաղին,

Նայեց սարին,

Ջնիկներին պարզ լճակի,

Ու կոկոաց այնպիս ուժգին,

Որ թի մնաց սիրով ճաքի..

Հայրարարեց նա ամենքին,

Լճակներին ու ծովերին,

Մեծ անդատի զազաններին,

Որ զավակն է հսկա կետի,

Որ փակել է նա ակունքը

Մի օր գետի...


Նա շատ փրկեց ու պարծեցավ,

Չեր բաժանվում կաղնու շուրջ

Քամիների կեղծ շշուկից,

Չեր իմանում, որ անել է

Տիղմաջրի շերեփուկից...



ԳՈՍԵՏ

Qիզ սուր, քաշի,
Հո, հո, հո, ախատեր ջան:


Այսպես մտերմիկ ու հարազատ է եղել գոմեշը հայ գյուղացու համար: Նրա հետ բեռ է կրել, լծկան քաշել, վար արել: Տարիներ առաջ ու նաև հիմա ապահով է համարվում այն ընտանիքը, որը գոմեշ ունի: Բացի օգնական ու բարեկամ լինելուց, նա նաև մարդուն կերակրում է, տալիս է կաթ, միս, իսկ նրա մածունն ու յուղը հատկապես համով են:

Դաճախ դուք նրանց կտեսնեք հորդ անձրևի տակ անշարժ կանգնած կամ ժամերով ջրափութում պառկած: Այդպես նրանք զովացնում են իրենց մաշկը, իսկ հետո չորացած ցեխը նրանց պաշտպանում է միջատներից՝ մոծակներից, մլակներից: Ժամանակին կազմակերպվել է նաև գոմեշների մրցավազը:

Գոմեշի երկար, լայն կճակները օգնում են նրան ցեխի և ծահճուտների միջով քայլելիս: Գոմեշն ունի հաստ պարանոց, ծամր մարմին, կարծ, անուր ոտքեր, մեծ գլուխ, երկար պոչ, նոսր մազածածկ, որ տարիքի հետ պակասում և աստիճանաբար անհետանում է: Թշնամուց պաշտպանվում է եղջյուրների միջոցով, ուստում է կանաչ, թարմ խոտ: Ընտանի գոմեշներն արտաքինից նման են վայրի կովերին, բայց աստիճանաբար դարձել են հեզ ու հնազանդ, լսող, կարծացել են նաև եղջյուրները:

Գոմեշները, որ լինում են վայրի և ընտանի, տարածված են Հարավային Ասիայում, Աֆրիկայում, Հնդկաստանում, Հարավային Եվրոպայում: Նրանք շատ կան նաև Պայաստանում:

Այս նաև աղջոր բուլոր կենդանիներից մեկական նմուշ վերցրեց իր բարպանի մեջ՝ մոռանալով միայն գոմեշին: Եռոք շրմեցի շնորհից և բայցանը լուզաց ցրի երեխին, գոմեշը կիսաբեշոց վաղից դժուռի բարպանը և սկսեց կանչել: «Աս յե, Աս յե»: Այս խցանց գոմեշին և օրմնեց, որ լավ լուշ բա, այստիվ: Ելդր օրվանից եւ գոմեշը սիրում է ջայրն և բառաշելիս «Ես յե, Աս յե...» է կանչում:



ԴԵԼՖԻՆ

Կաղուց ի վեր դելֆինների մասին գոյությունը ունեն հեքիաթների նման զարմանահրաշ պատմություններ:

Դունական լեզենդը պատմում է մի դելֆինի մասին, որն ամեն օր մի տղայի ծովածոցով տանում էր դպրոց ու ետ բերում: Մի անգամ տղան հիվանդացավ ու մահացավ: Դելֆինը սպասում էր նրան սովորական

տեղում և մեռավ իր փոքրիկ բարեկամի կարոտից: Դույն պատմիչը պատմում է, որ դելֆինները ձկնորսներին օգնում էին ձկներին ուրկանների մեջ քշել և դրա համար իրեն պարզ ստանում գինու մեջ թրջած հացի կտորներ:

Դելֆինները կաթնասուններ են և, չնայած ապրում են ջրում, ոս են շնչում: Դելֆինները ապրում են վտառներով՝ յուրաքանչյուրը 15–40 կենդանի: Երբ դելֆինն օգնության է կանչում, ընկերները սրբաց լողալով մոտենում են, բռնում են նրան երկու ծայրերից և պահում ջրի վրա, որ նա կարողանա շնչել: Նույն կերպ նրանք օգնում են մասև խեղղվող մարդուն:

Բայց օվկիանոսում դելֆինները շատ հաճախ ուղեկցում են նավերին:

Դելֆինները սնվում են թռչող ձկներով, փափկամորթներով, խեցգետնակերով: Նրանք լողում են ժամում մինչև 50 կմ արագությամբ: Գիտնականները պնդում են, որ դելֆիններն ավելի խելամիտ են, քան կապիկներն ու շները: Դելֆինները միմյանց հետ հաղորդակցվում են սովորի և չպացի նմանվող ծայներով:

Դելֆինները ապրում են խմբերով: Նրանց կյանքի տևողությունը 50, ավելի փոքրերինը՝ 30 տարի է:



ԵՂԵՇԻԿ

Rայկական բնաշխարհի դժվար է պատկերացնել առանց այծյամների: Արագավազ, փոքր եղջերու է այծյամը. մարմինը համեմատաբար կարճ է, վիզը՝ երկար, նրա գեղեցիկ մորթին ամռանը շիկակարմիր է, ծմռանը գորչ: Եղմիկը հիմնականում ապրում է անտառներում: Սնվում են խոտաբույսերով, վայրի պտուղներով ու հատապտուղներով: Միրում է ջրափի եղեգնուտներն ու բացատները: Որտորդները հետապնդում են նրանց համեղ նսի,


գեղեցիկ մորթու և գեղեցիկ եղջուրների համար: Ամռանը հասուն եղմիկները թափառում են միայնակ, իսկ աշնանը, ձմռանը խմբերով: Սայսին մայր այծյամը ունենում է 1-2 ձագ: Նրանց կաթով կերակրում է այնքան ժամանակ, մինչև կարողանան սնվել խոտով: Զագերը շուտ ընտելացող արարածներ են, դրա պատճառով էլ որտորդները շատ ժամանակ որսում են ծագերին և պահում տնային պայմաններում: Այծյամները ապրում են մինչև 16 տարի: Եղմիկները մեր բնության սրանչելի զարդերից են, նարնց պահպանելն ու բազմացնելը մեր բոլորի պարտքն է: Պահպանները մեր գեղեցիկ բնությունը:

Ասրդալից, վճիր երկնքով մի զիշեր էր, երբ մենք արքնացանք և որոշեցինք դիմավորել արշալոյր Մայմեխի վրա: Ծանապարհին այս ու այն առվազից ջուր խմելով, երգելով ու թռվալով՝ հասանք մի թփուրի: Որոշեցինք հենց այդ թփուրի մոր էլ հանգստանալ, ապա նոր շարունակելու ճանապարհը: Հանկարծ մեկը գոռալով փափավ: Մենք հանգստացրինք նրան, և նա ասաց, որ թփուրում գայլ կա: Բոլորը շփորփած էին. մեկը քար էր ծեռու առել մյուսը՝ փայտ, և իրար իրախոսելով շրջանցեցինք թփուրը: Տղաներից մեկը, որը բոլորից համարձակն է, հետ քաշեց թփերի խիստ այուղերը: Գայլի փփարին մի եղմիկ էր պարկած թփերի մեջ: Եղմիկը վիրավոր էր: Մենք վիրակապեցինք նրա առջևի բարակ ուրեմնը,

ճյուղերից պատգարակ սարքեցինք ու, եղնիկին
հերթերս առած, հասանք Մայմեխի զազարը:

Հաջորդ կեսօրին վերադաշնար ճամբար,
բոլորը հավաքվել ուրախ հետաքրքրությամբ նայում
էին եղնիկին, շոյում նրա փափուկ պարանցը:
Ամբողջ ամառ խնամեցինք եղնիկին, նրա հետ
մի երեսանցանք, դարձնանք ամբաժան ընկերներ:

Հետո մերենայով մարդիկ եկան և եղնիկին
պարան կենդանաբանական այգի:



ԵՂՋԵՐՈՒ

Եղջերուները պատկանում են երկկճղա-
կավորների կարգի կաթնասունների
ընտանիքին: Ունեն բարձր ոտքեր, կարծ
պոչ, երկար և շարժուն ականջներ: Կրում են
ծյուղավորված եղջյուրներ, որոնք ամեն տարի
փոխարինում են նորերով:

Նայտնի են 17 սեռ մոտ 40 տեսակ: Ապրում են
անտառներում, անտառատափաստաններում, տուն-
դրայում փոքր խմբերով: Նրանք անցնում են
հարյուրավոր կմ: Սնվում են ծյուղերով, տերևներով,
խոտերով, մամուռներով, քարաքոսներով: Սեռահասուն
են դառնում 1,5 տարեկանում: Չուգավորվում են
աշնանը կամ ամռան վերջին: Զագերին (1-2) մայրը,
մինչև նոր հղություն, կերակրում է կաթով: Խոկական
եղջերուներին են պատկանում ազնվացեղ եղջերուները,
քավոր եղջերուները, եղնիկը, մարալը: Տարածված են
Դրիմում, Կովկասում, Միջինի հարավում, Հեռավոր
Արևելքում: Մարմնի երկարությունը մոտ 200 սմ է, քաշը
100-300 կգ: Չուկրացած եղջյուրներից ստանում են
արժեքավոր դեղանյութ: Օգտագործում են միսը,
մորթին:



ԶԱՏԻԿ

Անչուր փոքրիկ կարմիր գնդիկ,
Խոստ վրան, թեր վրան,
Գորհան խառնիկ, ինչ ծիզուրիկ,

Մեզը կարմիր պուրպուրիկ,
շաք սիրուն է ու փոքրիկ
Ունի թեր ու պուրյան,
ինչ եք տառած դուք նրան:

Կարմիր, մեջքին ևն, ամենից հաճախ յոթ կետեր ունեցող այդ կլորիկ բգեղին, հավաճար, բոլորդ գիտեք: Բգեղի «զատիկ» անվանումը շատ հին է և կապված է, ըստ երևոյթին, այն բանի հետ, որ նա երևան է գալիս «Զատիկ» Եկեղեցական տոնի օրերին:

Երբ զատիկը վտանգ է գգում, նրա ոտքերի ծալքերում հայտնվում են նարնջագույն հեղուկի կաթիլներ: Այդ հեղուկը շատ անդուր համ ունի և խրտնեցնում ու վանում է բգեղի թշնամիներին:

Բայց քշերը գիտեն, որ առաջին հայացքից անվճառ թվացող զատիկը գիշատիչ է: Կարծում եք, թե նա զո՞ր է եռանդով վազվում ծյուղերի տերևների վրայով: Ամենաին: Նա կեր է վնատրում: Նրա կերը լվիճներն են՝ մատղաշ, բույսերի հյութը ծծող մանր միջատները: Դենց այդ լվիճներին էլ գտնում և խժում է զատիկը: Նա լավ ախտորժակ ունի, օրվա մեջ կարող է ուտել մինչև 200 լվիճ: Զատիկի թրթուրն ուտում է գրեթե երկու անգամ ավելի:

Զատիկ, զատիկ, թեզ վրա
Չույզ թեկը կամ, զույզ զրահ,
Երբ վտանգ է սպառնում,
Զրահներդ թեկը դառնում
Փրկում են թեզ վտանգից,
Ու չես զրկում դու կյանքից:
Թեկն փոքր ես, մի մատիկ,
Բայց շատ խելոք ես, զատիկ:



ԶԵՐՐ

Հայտ հին ժամանակ զերրերը շերտավոր չէին: Դրանք սպիտակ ծիուզներ էին: Դիմա լսեր, թե ինչպես սպիտակ ծիուզները դարձան շերտավոր:

Ծեր ներկարարը մենակ էր ապրում:

Մի օր զերրը հյուր եկավ ներկարարին և հավանեց նրա տնակը:

— Կարելի՞ է ես քեզ հետ ապրեմ այս տնակում,— հարցող զերրը:

Ներկարարը համաձայնեց: Նա շատ աշխատաեր էր: Ներկում էր տներ, տանիքներ: Իսկ զերրը մնում է տանը և սպասում ներկարարին:

Մի օր ներկարարը նկատեց, որ իր տնակի ցանկապատը հնացել է: «Վաղն նեթ կներկեմ»,— մտածեց նա:

Մյուս օրը՝ առավոտ շուտ, ներկարարն արթնացավ ու անցավ գործի:

Թիշ հետո տնակի ցանկապատը կարծես նոր լիներ:

— Զգույշ, զերր, ցանկապատին չկպչես: Ներկը դեռ բաց է, — ասաց ներկարարը և գնաց գործի:

Մյուս օրը զերրին հյուր եկան նրա ընկերները՝ բոլոր մյուս զերրերը:

— Ի նչ լավ է այս տնակում, — ասացին նրանք:

Ճետո զերրերը դուրս եկան տնակից և սկսեցին պարել ու ցատկուել բակում, բսկեցին նոր ներկած ցանկապատին: Սպիտակ ծիուզները դարձան շերտավոր:

Երբ ներկարարը տուն եկավ, տեսավ իր ընկերոջը շերտավորված և տխուր-տրտում:

— Մի տխորի, հիմա ես քեզ կլողացնեմ: Բայց ներկարարը ինչքան օճառեց, ինչքան տրորեց զերրին, ներկերի շերտերը չանցան:

Դիմա իմացա՞ր, թե ինչպես սպիտակ ծիուզները դարձան շերտավոր:



ԵՇՆ ՈՒ ԳՈՂԵՐԸ

Եշր բնուան գայկ
Հոգհում է, նայում:
Տերի է անհանգիստ
Նրան նախալում.
— Ծույլ վեր կաց,
Գախչենք,

Ես մի բարի, համեստ էշ եմ,
Տեղ կա հազար ավոր արժեմ:
Մեծքի առած ահազին թե՛ն,
Կանցնեմ դժվար կածամ ու լիո:

Գողեր են զալիս...
— Գալիս են, թռ զան,
Ինքը մղածիք,
Ինչ համար մեկ չէ՝
Ով թե՛ն կրարձի:

Զորում լինեն, սարի ծերին,
Չուր կպանեն հնձվորներին:

ԲԱՆՁԱՐԱԲՈՒՅՅԾ ԻՇՈՒԿԸ

Մի իշուկ կաք քաղիան ամող,
Գլուխը կախ անդուլ քանող:
Սարզը մղավ կանուխ-կանուխ:
Հնձեց սմբուկ ու ամանուխ:
Երբ գազարին հերքը հասավ,
— Այ թե համով բան է, — ասավ:
Ողջը արեց գակմուվրա,
Բայց դու խոսքը լիիր նրա.
— Ինչքան դժվար գործ կա՝ կանեն,
Զեր այգին էլ կրաղիանեն...

Ասդզած մի օր կանչում է կենդանիներին, որ իելլ
բաժանի: Ամեն կենդանի գալիս է իր բաժինը վերցնում:
Բայց վերջը ներկայանում է էշը: Ասդզած դալիս է
նրան իր մոտ մնացած մի փոքր էրրոր իելլը: Էշն առումէ:
«Բայս ևս կա փոքր էրրոր իելլով ոչ ոչ պետք առեմ»: «Ա նաև
չունի, — առում է Ասդզած, — վազը շո՞շ կդասաւ,
ականջներ եմ բաժանելու»: Էշը հեցիւյալ օրը շո՞շ է
ներկայանում: Ասդզած մեծ՝ մեծ ականջներ է դալիս
նրան: Դրա համար էլ էշ իելլը փոքր է, ականջները՝ մեծ:



ԸՆՉՈՒՂՏ

Մորքն առյուծի,
Մորքն այծի,
Ի՞ս երկար զշի
Կճակատիք ինձ:

Երկի վրա բնակվող «ամենաբարձրահասակ» կենդանին է ընծուղտը: Նրա 6 մետրի հասնող հասակի կեսը կազմում է պարանոցը:

Այդ երեք մետրանոց պարամոցում, ինչպես նաև մարդու և բոլոր կաթնասունների պարանոցի ողերը յոթն են, միայն ընծուղտինը շատ ծգված են:

Առաջին հայացքից ընծուղտը շատ տարօրինակ կենդանի է թվում: Երկար վահն նստած է փոքրիկ եղջյուրիկներով գլուխը:

Արօքի ոտքերը երկար են հետևինից: Պոչը մեկ մետր է: Գույնը դեղին է մուգ շագանակագույն նախշերով:

Երկար ոտքերի և պարանոցի շնորհիվ բարձր ծառից էլ է տերև պոկում և սնվում նրանով: Երկար ոտքերով ավելի հեշտ է գիշատիչներից փախչելու:

Բարձր հասակը նրան հմարավորություն է տալիս հեռում տեսնելու և ժամանակին նկատելու գիշատիչին: Նրա վրայի նախշերը օգնում են թաքնվելու ծառերի ստվերում: Իսկ երկար ոտքերով վատ չի վազում արշավածիուց:

Բայց բոլոր ընծուղտները չեն, որ այդպես են: Մոտ հայրուր տարի առաջ Աֆրիկայի անտառներում հայտնաբերվեց մի անսովոր կենդանի, որը ավանակի մեծության էր:

Տեղացիները նրան օկապի անվանեցին: Պարզ էց, որ օկապին ընծուղտի ցեղակիցն է:



ԹՈՒԹԱԿ

Որ թռչունն է գույնազույն,
Որ ծնկ կրկնում է իսկով:

Թութակները իրենց ամուր ու կեռ կտուցով ջարդում են բույսերի, պտուղների ու սերմերի կեղևները և սնվում միջուկով: Խոշոր թութակները կարող են ջարդել ամենաամուր ընկույզը: Բացի դրամից, կտուցը թութակներին օգնում է

մազգցելու ծառերի ճյուղերն ի վեր, այն, ասես, նրանց երրորդ ոտքը լինի:

Թութակների մեծ մասի թևերը լավ են զարգացած, և նրանք արագ են թռչում: Սակայն կան նաև չթռչող թութակներ: Բնության մեջ թութակները միմյանց հետ հաղորդակցվում են սուր, ականջ ծակող ծղճոցով կամ մեղմ ճռվողյունով:

Ինչ խոսք, նախաղասություններն ու բառերը թութակներն արտասանում են ոչ թե գիտակցաբար, այլ սոսկ սերտած, կրկնում են միշտ միևնույնը:

Թութակները տարբեր չափերի են լինում (13 սմ): Դայտնի են թութակների երեք հարյուրից ավելի տեսակներ:



ԻՇԽԱՆ

Ա ևանի համրահայտ, հրաշալի իշխանը առաջացել է Դայաստանի լեռնային վճիռ ու սառը գետակներում, ժամանակից շուտ տարածված կարմրախայտից: Գեղեցիկ ծովակ է իշխանը: Նրա արծաթափայլ, զլանած կամ լիլկած մարմինը գրեթե ամբողջությամբ պահած է խոշոր, սև, երրեմն նարնջագույն կամ կարմիր պտերով: Ծատ համեր է նրա համարյա անփուշ միջը: Ով երբեւ իշխան չի կերել, չի ճաշակել աշխարհի ամենաընտիր ուտելիքներից մեզը: Իշխանը սնվում է ջրի հատակին ապրող մանր կենդանիներով, որդերով, խխունջներով:

Իշխանը միջին մեծության ծովակ է: Իշխանի պաշարները հարստացնելու համար ստեղծվել են մի շարք ձկնաբուծարաններ:

Ժամանակին Գյոկ-չայ կամ ճըռան գետից միայն մի տեսակ սև ծովակ էր դուրս գալիս, որը վնասում էր ուտողին: Այս կողմերում ապրող մի մարդ՝ Իշխան անունով, որ, բողնելով աշխարհային կյանքը, ճգնավոր էր դարձել, փայտից ծովակ է շինում և նետում գետը: Ժամանակ անց նույն գետից սկսում է դուրս գալ մի նոր հրաշալի ծովակ, որը ճգնավորի անունով կոչվում է իշխան:



ԼՈՒՍԱՆ

Կ ատվազգիների ընտանիքի կաթնասուն կենդանի է: Սարմնի երկարությունը 82–109 սմ է, պոչինը՝ 20–31 սմ, քաշը՝ 8–17 կգ: Ութերն ուժեղ են, համենատարար երկար, թաթերը՝ լայն: Ականջների ծայրերին ունի վրձնածեր մազափունց:

Գույնը տարերե է՝ միատարր կամ բծավոր: Տարածված է Եվրոպայում, Ասիայում, Հյուսիսային Ամերիկայում: Սպորում է անտառներում, հարթավայրերում, սարերում: Սնվում է նապաստակներով, մկներով, կրծողներով ու թռչուններով: Դոջությունը 9–10 շաբաթ է, ունենում է 2–3 ծագ: Դայաստանում տարածված է Արարատի, Ալավերդու, Իջևանի, Վանաձորի, Կրասնոսելսկի, Ղափամի, Մեղրու շրջաններում: Օգտագործվում է միայն նորթին:



ԽՈՉ

Այս կենդանուն մարդը ընտելացրել է շուրջ 10 հազար տարի առաջ. Նախնադարյան որսորդին վայրի խոզերը՝ վարազները, հանդիպում էին ամենուրեք:

Խոզը դարձավ հիմնական և ամենատարածված ընտանի կենդանիներից մեկը: Երկար տարիների ընթացքում, ենթարկվելով մարդու ազդեցությանը, այդ կենդանին խփառ փոխվել է և ոչ միայն արտաքուստ:

Քնում է գիշերը, սնվում ցերեկը, երկու-երեք անգամ ավելի շատ խոճկորներ է ունենում, բան վարազը, և իր վայրի ցեղակցի կողքին հսկա է թվում:

Խոզը շատ արժեքավոր կենդանի է: Ցեղական խոզը ծնում և սնում է 10-12, իսկ ոճկորդակիրները՝

28-32 խոճկոր: Տարվա մեջ երկու անգամ ծագ են տալիս: Մատղաշները շատ արագ աճում են ու գիրանում:

Խոզերը վատ են տեսնում, բայց փոխարենը զարգացած են նրանց լսողությունն ու հոտառությունը: Դայաստանում խոզերի բուծմամբ զբաղվել են հնագույն ժամանակներից:

Հիսուսն ու Մահմեդը գրագիր են գալիք՝ գեղնից աղյուսոր հանելու: Հիսուսնը իսկում է գավազանը գեղնին և խոչուն մի զարութագյուղը է բիում: Հերթը հասնում է Մահմեդին: Աս Հիսուսնին դանում է այնպես, որ ինքը թափուն ջրով և բիեր էր թուշել: Իսկում է մեկն, մյուսն, երրորդին՝ ջուր չեն գալիք: Դու մի ասի, խոզը եկել, հոզը գործել, դիկը ժահել և ջուրը հանելեր: «Գնում է վերջին դիմ բեղը՝ բէսնում է, որ խոզը պատկել է դիմ փոխարեն:» Բարկացած Մահմեդը բանում է խոզի պոչչից, Յօհաննեսում առանձ: «Ես անձնված լինեմ դուն:» Հիսուսն իսկույն վրա է բերում: «Բնբանած դիզը միայն թող անիշնված մէն:»

Եյտ է պարհառան ահա, որ թուրթերը խոզի միու չեն ոդուստ, իսկ Հայերն էլ միայն խոզի ոդուն են դեմ դցուստ:

Խոզը իրեց
Դուն ու պոչ
Ու պղպորեց
Զուրբ ջինք.

Փովեց մեջը
Ու ասաւ.
– Ոլիսայ, ինչ լալ
Տեղ է սա...



ԾԻԾԵՌՆԱԿ

Երկու սիրահացի ունի,
Մկրտչութեա սպահի ունի,
Կուրծքի սպահութեա հայր Հօնան,
Թռեցր ուն սպաթ Հօնան:

Օ իծեռնակներն ապրում են տարբեր վայրերում, միմյանցից զանգանվում են թե՝ արտաքինով, թե՝ ապրելակերպով: Բայց բոլորի թևերն էլ նեղ են, երկար, ծայրերը՝ սուր: Քաղաքային ու առափնյա ծիծեռնակների պոչի բացվածքը լայն չէ, իսկ գյուղականինը մկրատած է:

Ծիծեռնակների թռիչքին նայելիս կարելի է կարծել, թե նրանք հենց այնպես խայտում են, խաղում, «լողանում»՝ արկի ճառագայթներում: Իրականում նրանք անդադար «աշխատում» են՝ միջատներ են որսում: Ժողովուրդը ծիծեռնակների հետ մի ճախանշան է կապել. եթե նրանք բարձր են թռչում լավ եղանակ է լինելու, ցածր են թռչում անձրև է գալու: Նախանշանը ծիշտ է, բայց բանն այստեղ ոչ թե ծիծեռնակներն են, այլ այն միջատները, որոնց նրանք որսում են: Անձրևից առաջ, երբ օդն ավելի է խոնավում, միջատների թևիկներն ուռչում են և ծանրանալով՝ նրանց ներքև քաշում: Ծիծեռնակները միջատներին որսում են միայն օդում: Ծիծեռնակները հազվադեպ են իջնում գետնին, որովհետև վատ են քայլում և գետնից էլ դժվարությամբ են վեր թռչում: Զուրն անգամ խմում են թռչելիս՝ կտուցով որսալով կաթիլը: Պատահական չէ, որ նրա անունով են կոչվել հայկական հին բնակատեղիներ, ճարտարապետական հուշարձաններ: Դրանցից են, օրինակ, Ծիծեռնակաբերդը Երևանում, ուր կառուցված է Մեծ Եղեռնի գոհերի հիշատակը՝ հավերժացնող և հայ ժողովորդի վերածնունդը՝ խորհրդանշող հուշարձանը,

5–6–րդ դարերի Ծիծեռնակավանքը Գորիսի շրջանում:
Նրա անունն է Կրում նաև ծեր սիրելի ամսագրերից մեկը
«Ծիծեռնակը»։ Ծիծեռնակը ներշնչանքի աղբյուր է եղել
հայ գրողների ու բանաստեղծների համար։ Զեզանից
շատերն են հավանաբար երգում Գևորգ Դոդիխանի
«Ծիծեռնակ» բանաստեղծության խորքերով ստեղծված
հանրահայտ երգը, որը, «Կռունկ» երգի նման, դարձել է
հայրենիքի կարոտի ու հայրենասիրության խորհրդանիշ։

«Դեպի ո՞ւր, ինչ ասա,
Թոշում ես այդպիս արագ։»

**Առ ժամանակին մի ճարդար ու խաղբախոս
Երեխա է Եղել։ Խորը մայրը, աղելով ջրան, առաջ
Հիշանոց է Յեղացել ու պահանջել է ամուսնուց, որ
Կրօք զավակի ճկույթը և բա իրեն ուստի, որպեսզ
առաջածան։ Ամուսինը ակամայից հարարել է շար
ինչ էամելը, էրրել է նրա ճկույթը, որից երեխան
մահացել է։ Երբ ամուսինը երեխայի ճկույթը
դարել է կնաքը, որ նո ուստի ու առաջածան։
Ճկույթը հանկարծ ժիշեանակ է դարձել ու թուլ
է՝ երգելով։**

Երժեւան եմ հա, ժիշեւան եմ,
Վորը մորթած ժիշեւան եմ,
Մորը կերտած ժիշեւան եմ,
Թուլ, ժիշեւանակ եմ գառել։

Ծիծեռնակ, ծիծեռնակ,
Դու՝ զարնան սիրուն բռնակ,
Դեպի ո՞ւր, ինչ ասա,
Թոշում ես այդպիս արագ։
Այս, բոիր, ծիծեռնակ
Ծնած լրեկս Աշրաքակ,
Ան շինիր քո բույնը
Հայրենին կրուրի լրակ։
Ան հեռու ալեռը,
Հայր ունին սգավոր,
Որ միակ իր որդուն
Սպասում է օրեօր։
Դեհ, սիրուն ծիծեռնակ,
Հեռացիր, բոիր արագ
Դեպի հայոց երկիրը՝
Ծնաց լրեկս Աշրաքակ։



ԿԱՊԻԿ

Կենդանի էմ մարդու սեն,
Ուշեմ և ձեռք, և երտն,
Տունի պարուն անկուտը,
Մէջ ծառերի կուպոր:

Մարդմ առաջացել է ոչ թե այժմյան կապիկներից, այլ հնագույն խոշոր մարդաննան կապիկներից:

Հաստ ընդհանուր հատկանիշներ կան մարդու և կապիկ արյան բաղադրության, ուղեղի կազմության, զգայարանների և կմախքի կառուցվածքի միջև։ Կապիկների օրգանիզմը հարմարեցված է ենց ծառերի վրա ապրելու պայմաններին։ Միայն ծառերի վրա է, որ կապիկներն իրենց թերևն և ազատ են զգում։

Գետնի վրա նրանք դառնում են անճար և անօգնական։ Ընորիկվ իրենց երկար ծեռքերի ու ավելի կարծ ոտքերի, շնորհիվ իրենց ափերի ու ներքանների, որոնք հավասար ճարպկությամբ են կառչում ծյուղերից, կապիկները կայծակի արագությամբ, ծաղից ծառ ցատկելով, տեղաշարժվում են անտառում։ Ծառերի վրա նրանք գտնում են իրենց սնունդը՝ պտուղներ, տերևներ, նորածիլ բողբոջներ ու շիվեր, միջատներ, թռչունների ծվեր։

Ծեր կապիկ եմ, դեռ ճարպիկ եմ,
Տուն-լրեն ունեմ ևս պապիկ եմ,
Բայց այնպիս եմ ես ամաչում,
Թռոնիկներիս չեմ ճանաչում։
Այս զիտե՞ք պատճառն իմչ է,
Դե, կապիկ եմ, խելքս քիչ է։



ԿԱՏՈՒ

Գիշեր-ցերեկ ծան է զալին,
Մուկը բռնուծ վայ է զալին:

Ընտանի կատուները շատ նման են իրենց վայրի ցեղակիցներին՝ շերտավոր վագրին, արքայական առյուծին:

Նրանք միևնույն կատվազգիների ընտանիքից են: Ընտանի կատուն երկար ու փառավոր պատմություն ունի: Երբ մարդիկ սկսեցին գրաղվել երկրագործությամբ, աշ-նան բերքի պաշարը պահում էին շտեմարաններում ու ամրարներում: Բայց արի ու տես, որ այդ բերքի մի զգալի մասն առնետների ու մնաների բաժին էր դարձում: Նրանցից ազատվելու համար մարդն ընտելացրեց կատվին:

Դին Եգիպտոսում կատվին նույնիսկ սուրբ կենդանի էին համարում: Կատուն համբերությամբ, ժամերով հսկում է մկան բույնը, միայն պոչի ծայրն է ցնցվում ու մատնում նրա լարված վիճակը:

Սիրելին եմ ամեն դան,
Մանուկներին բարեկամ,
Մուշտիկ՝ դաք ու քարուշ,
Ես՝ մկների աշքի փուշ:
Ամրող օրը դանը մնում,
Փափոկ բարձի վրա քնում,
Հնաց որ մուկ եմ վեւսնում հանկարծ,
Բագեի պես որս եմ անում:

Կար մի կարու,
Աշխարում էր
Տեղեկարու:
Ով ինչ հարցներ,
Միայն կասեր.
— Թե որ բռնեք
Դուք այդ ուղին,
Կհանդիպեք
Մի շան դղի,
Իսկ թե բռնեք
Դուք այս ճամփան,
Չեր դեմ կելանի

Բունը մկան:
Անրիկ հարցնումը,
Պալախանը՝
Կան շուն, կամ մուկ:
Բողոքեցին:
Հիմա կարուն
Գործազուրկ է,
Չի աշխարում:
Ման է զալին
Նա ալարկուի,
Ծնից հեռու,
Մկների մուր:



ԿԱՐԱՊ

Թողում է հավ ցի,
լողում է նավ ցի,
Երգում է այն ժամին,
Երբ ծոյր է իր ծանրին:

Կարապը, որ ամենախոշոր և ուժեղ թռչուններից է, դեռևս խոր անցյալից համարվում է գեղեցկության ու սիրո, անաղարտության ու քնքշության խորհրդանիշ:

Ծաս զրույցներում ու ավանդություններում է գովերգվել կարապը: Մի հինավորց լեգենդ կա կարապի երգի մասին, որ այդ չքնաղ թռչունն, իբր, երգում է մեռնելուց առաջ:

Կարապն այդպիսի երգ, իհարկե, չի երգում: Առհասարակ, նա երգեցիկ թռչունների թվին չի էլ պատկանում: Թշշան կարապը կարող է միայն անշտապ կրնչալ, իսկ կամչող կարապը՝ շեփորի բարձր ու հանդիսավոր հնչյուններ արձակել:

Կարապները բացառիկ զգայուն ու զգուշավոր թռչուններ են և բնադրում են խոլ, գրեթե անմատչելի լճերի մոտ աճող ամենախիտ եղեգնություններում:

Փօրիկ կարապների դաստիարակության հոգար հայրն ու մայրը կիսում են միմյանց միջև:

Կարապը գեղեցիկ և այժմ արդեն բնության հազվագյուտ էակներից է: Արգելված է նրա որսը:



ԿԵՆԳՈՒՐՈՒ

Ո ա մի շատ ինքնատիպ կենդանի է: Նույնիսկ կենդանաբանական այգում կաթելի է տեսնել, թե ինչպես մոր փորի վրայի պարկից հանկարծ դուրս է ցցվում կենգուրուի ծագի հետաքրքիր դնչիկը:

Կենգուրուի ծագը ծնվում է կույր, լրիվ մերկ ու

շատ փոքրիկ: Դսկա շիկակարմիր կենգուրուից, որի երկարությունը պոչի հետ միասին հասում է մինչև երկու և կես մետրի, ծնվում է ընդամենը 3 սմ մեծության ձագ: Ծնվելուց անմիջապես հետո ձագը կատարում է իր առաջին ճանապարհորդությունը, առանց մոր օգնության, իր սուր ճանկերով կառչելով մոր փորի մազերին հասնում է պարկին ու ներս սողոսկում:

Կենգուրուի ծագը ճայրական կաթով սնվում է մոտ 65 օր, հետո սկսում է դուրս նայել պարկից, ապա նաև դուրս գալ այնտեղից: Երբեմն նա մտնում է պարկի մեջ պարզապես տարանալու համար:

Կենգուրուի հետևի ուժերն ուժեղ են, պոչը հաստ, ուսերը՝ նեղ, իսկ առջևի թաթերը շատ փոքր են, մնան մարդու ծեղքերին:

ԿԵՏ

**Օվկիանոս է Հայ Ֆրայն ասորում,
Մի սայլ պեղ կունի Հրամ բերանում:**



Նու վիրահարի մի ճարմին,
Ցայրացնելով՝ իր ճեղքին,
Օվկիանոսի բնուիչ,
Կարծևառն է գիշաւիչ:

Q Եզանից շատերը, երկի, կարծում են, թե կետը ծուկ է, որովհետև ապրում է ջրում: Բայց կետը ծուկ չէ և շնչում է ոչ թե խորհներով, այլ թռերով: Ու թեև նա կարող է երկար մնալ ջրի տակ, այնուամենայնիվ, անհրաժեշտ է լինում, որ օդ շնչելու համար ջրի երես դուրս գա: Կետի

արտաշնչած օդում շատ է ջրային գոլորշին: Ոունգներից դուրս գալով՝ գոլորշին սաշում է և վերածվում ջրի մանրագույն կաթիների շիրի:

Պատահում է, որ կետը դեռ չի երևում, բայց ծովի վրա արդեն շատրվան է ցայտում:

Կետերը կարնասուններ են, ծնում են կենդանի ձագեր և նրանց սնում կարով: Կետերը շատ բազմազան են: Գիտնականները նրանց ստորաբաժանել են երկու խմբի՝ ատամնավոր և բեղավոր:

Ատամնավոր ամենամեծ կետը կաշավոտն է, որի երկարությունը հասնում է 15–20 մ–ի:

Մեկ օրվա մեջ կետն ուտում է 2–4 տոննա կեր, միայն «ճաշի» կամ «նախաճաշի» համար հարկավոր է մեկ միլիարդ փոքրիկ խեցետին:

ԿԵՏՆ ՈՒ ԾՆԱԶԿՆԵՐԸ

Կերը հսկա էր,
Ուժեղ էր ծովում,
– Ուժեղ եմ, ամպարտ, –
Գլուխ էր գովում:
Ընածկները
Այդ որ լսեցին,
Կերի շուրջը ուղղը
Վկառ կազմեցին:

Ջշեցին կերին
Սինչե ծանծաղուր,
Ու խրվեց ճահճում
Կերը հիսում փուր:
Ընածկները
Այդ որ լսեցին,
Կերին խարեցին,
Ուժեղ հսկային
Խմբով լափեցին:



ԿՉԱԶԻՍ

Կարիսմատիկ միջին մեծության (40–80 սմ) կենդանիներ են, մարմինը ծգված է, ճկուն, փափուկ աղվանազով ծածկված: Լինում են գորշ և մուգ շագանակագույն: Դայտնի է 6 տեսակ: Տարածված են Եվրոպայում, Ասիայում և Հյուսիսային Ամերիկայում: Դայաստանում տարածված են կովկասյան կաքիսները, որոնք ապրում են քարքարոտ և ժայռոտ վայրերում:

Մնակում են մանր կրծողներով, թռչումներով, ընկույզով, հատապտուղներով, պտուղներով: Գիշերային կյանք են վարում, լավ մագլցում են: Զուգավորվում են հուլիս–օգոստոս ամիսներին:

Ոչնչացնում են գյուղատնտեսության վնասատումներին, մորթին արժեքավոր է:



ԿԿՈՒ

Կմեն ոք, ով եղել է անտառում, լսել է կկվի կրինչը: Դայտնի է, որ շատ կկուներ ծու են ածում ուրիշ թռչումների բներում, իսկ կկվի ծվից դուրս եկած ծագը հրում, բնից դուրս է նետում «տանտեր» ծագերին: Բայց քչերը, հավանաբար, գիտեն, թե ինչ մեծ ախորժակ ունի կկուն:

Դրա շնորհիվ նա փոխհատուցում է այն վճասը, որ
պատճառում է ուրիշ թօչուններին կործանելով:

Նա ոչնչացնում է բազմաթիվ՝ այդ թվում այնպիսի
վճասատուների, միջատների, որոնց մյուս թօչունները չեն
ուսում:

Չու 5 միշտ դնում ուրիշի բնում,
Իր հորին ռույնն է թողնում ու զնում:




Ուրիշի բնում ձներ է դնում,
Եկ իր անունն է սևուրդ կրկնում:

Արև, գարուն, կանաչ օրեր,
Մայրը փուեց փափուկ շորեր,
Իր բալիկին դրեց ճնճրում,
Գարնան հովն է մեղմիկ փշում..
Մայրը դաշտում գործի անցավ,
Իր բալիկին նա մոռացավ:
Մեկ էլ լրեսավ՝ ճոճքը դարպարկ,
Գլխին զարկեց, դարձավ քոչնակ:
Վիշտը սրբում, ամեն զարուն,
Թափառում է նա անրառում:
Լաց է լինում հոնարդ-հոնարդ,
Կանչում չագին.
— Կու—կու,
Կու—կու...

Հարուս ժամանց հօնք է կապառմ, երեխային
պանամ մեջը և գնում խոշհան անելու: Երբ
ժամանակ անց վերադառնուածէ, երեխային այլ հա-
շի գրեթե պանամ:

Յամից և սկիսառի վախից նա թռչուն է
պատճեռուած և «կո—կու» կանչելով սկսում է
վնայրել երեխային:



ԿՈԿՈՐԴԻԼՈՒ


Ի՞ս ցուշը ծով և օվկիանոս է,
Են անվախ լողորդ կոկորդիլուն եմ,
Պոչս երկու է,
Ժերման հակա,
Ինձ անվանում են Նեղոսի արք:

Կոկորդիլուների մարմնի երկարությունը 2–5, երբեմն էլ մինչև 6 մ է: Գույխը տափակացած է, երկար դնչով, պոչը հզոր է, վերջավորությունը համեմատաբար կարծ է: Մաշկը հաստ է, մարմնի վերին, ստորին հատվածները և պոչը ծածկված են խոշոր եղջերային վահանակներով:

Մեջքի, որոյ տեսակների նաև փորի վահանակների տակ կան ուսկրային ամուր թիթեղիկներ, որոնք զրահ են առաջացնում: Լավ զարգացած են տեսողությունն ու լսողությունը: Սիրտն ունի միջնապատով լրիվ բաժանված 2 փորոք: Թոքերը մեծ են բարդ կառուցվածքով: Ստամոքսի պատերն ամուր են, մկանային: Միզապարկ չունեն: Ապրում են գետերում, լճերում, ջրառատ ճահիճներում:

Ակտիվ են գիշերը: Մնվում են հիմնականում ձկներով, թռչուններով: Բազմանում են ձվադրությամբ: Զվերը (10–30) էգը դնում է ավազի մեջ փորված փոսիկներում: Երաշտի ժամանակ կոկորդիլուները խորասուզվում են տիղմի մեջ, քուն են մտնում մինչև անձրևների սկսվելը: Էայտնի է 25 տեսակ:

Կոկորդիլուների միմն օգտագործվում է որպես սնունդ, իսկ մաշկն ունի արդյունագործական նշանակություն:



ԿՈՎ


Մարդու ընտելացրած առաջին կենդանիներից էր վայրի ցուլը՝ տուրը: Դա զարավոր տարիներ առաջ որսորդներն սկսեցին բռնել ու իրենց բնակատեղին բերել տուրի ծագեր և ընտելացնել նրանց: Ենթադրվում է, որ տուրից էլ առաջացել են ընտանի կովերը:

Դնադարյան մարդու համար կովն ու ցուլն այնքան մեծ նշանակություն ունեին, որ շատ ժողովուրդներ նրանց աստվածացնում էին: Իսկ որ կովերը կարելի է կրել ու հիմանալի սմնդամթերք կաթ ստանալ, հայտնի է դարձել շուրջ 2800 տարի առաջ:

Իսկ գիտե՞ք, թե որքան կաթ է տալիս կովը 1 օրում՝ 20 լ-ից ավելի:

Յարուսավյան ցեղի ռեկորդակիր կովերը, օրինակ, 1 օրում տալիս են ավելի քան 80լ կաթ: Ցուրաքանչյուր ցեղ լավ է իր «ծննդավայրի» արոտավայրի, բնակչիմայական պայմանների համար:

Ամեն մի ցեղ ունի իր առավելություններն ու թերությունները: Որոշ կովեր շատ, բայց ոչ այնքան յուղալի կաթ են տալիս, մյուսները՝ ընդհակառակը: Գիտնականները աշխատում են բուժել կովերի այնպիսի ցեղեր, որոնք բավականին յուղալի ու շատ կաթ տան:





ԿՐԻԱ

Այս հվատակ է կրիանքը շն վայում,
 Եկ իր ձվերն է ածում ավազում,
 Գիրտն ավազը ճայրական ծոց է,
 Զագերի համար զերմ օրորու է:

Կրիաներ կան, որոնք ցանքային են և ապրում են բացառապես ցանքապում: Կան և ջրային կրիաներ: Այժմ հայտնի է կրիաների 210 տեսակ: Կրիա կա լուսկու սուսփի չափ է, կրիա կա

Երեխ գիրտ
 Առաջն իմաստուն:
 «Ով չի շրապում,
 Շուրջ է համանակ պուն»:

Ուշում էն զերին
 Յուր կրուկ թափի,
 Իր կյանքում երբեք
 Նու չի շրապուի:

Չորս ուրբ ունի, քայլ շունչ չէ,
Չու է տօռած, թռչող չէ,
Խոր է ուրպած կովի ստա,
Տանիք ունի, քայլ կրուն չէ:

Ինչ սինդոր է դահուպազմոր,
Մեղքի գնահան ունի անցար:

Խոր է ուրպած կով չի,
Չու է տօռած կով չի:

Կրիտն առաջ գուշ և շագ վարձ տանող
Ջրազայտան է Եղիլ: Ըշտարի մեկը մի օր անիժում
Է նրան անիբաժ վարձ վերցնելու համար և տառամ.
«Քեզ բենելմ այդ հոկուը մեշտ (դդմի աման,
որով վարձն Են շատում) գլմիկ ման գալիս»:
Ըշտարի անեւծէց անմիջապես հարտարվում է, և
Ջրազայտանը կրիտ է դառնառամ:

ԿՈՌԻՆԿ



Գարնանը, երբ դաշտերում սկսում է հալվել ձյունը, իսկ անտառում երևում են ճնհալի առաջին նշանները, դուք կարող եք լսել կրումկների ձայնը:

«Կը՞ո, կը՞ո, կը՞ո», – ոչ շատ բարձր լսվում է կեչուտի այն կողմից: Զրույցն սկսում է թօշուններից մեկը: «Կը՞ո,

կը ո...», – նրան պատասխանում է երկրորդը, ապա՝ երրորդը... Նրանց ծայներն անընդհատ մոտենում են, և ահա դաշտի վրա երևում է կռունկների սեպաննան երամբ: Թոշուններն առաջ են շարժվում դանդաղ, ասես ծգտելով իշել այն վայրերը, որտեղից հեռացել էն աշնանը:

Կռունկները տուն են դառնում: Նրանք հոգնած են: Այսօր ամբողջ երանը կգիշերի դաշտում: Իսկ վաղ առավոտյան, նախքան արևածագը, նրանք ծայն կտան իրար, կստուգեն, բոլո՞րն են, արդյոք, պատրաստ շարունակելու ճանապարհը, ապա դանդաղ, բայց վստահորեն կտարածեն թևերն ու կուղղվեն դեպի իրենց հեռավոր, բայց հարազատ վայրերը:

Կռունկները շատ գգուշավոր թոշուններ են: Դեռ հեռվից ժամապահ ծեր կռունկը նկատում է մոտեցող մարդուն և տագնապի ազդանշան տալիս: Երբեմն հաջողվում է թաքուն դիտել կռունկների գարնանային ուրախ պարախաղերը: Իսկ երբ դաշտում ու անտառներում նորից երևան ձնիալի առաջին նշանները, մենք անհամբերությամբ կսպասենք նրանց վերադարձին:

Նման անհամբերությամբ օտարության մեջ գտնվող հայ պանդուխտը ևս սպասում է կռունկի վերադարձին, որ հարցնի նրան.

Կռունկ, ուստի՝ կուգաս, ծառա ևս չայնիդ,
Կռունկ, մեր աշխարհեն խապրիկ մը չումի՞ս,
Մի՛ վազեր, երամիդ շուկով կհասնիս,
